ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ

ԳՆՈՒՄՆԵՐԻ ՀԵՏ ԿԱՊՎԱԾ ԲՈՂՈՔՆԵՐ ՔՆՆՈՂ ԱՆՁ

ք. Երևան 09.08.2019թ.

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

ՀՀ ԳՆՈՒՄՆԵՐԻ ՀԵՏ ԿԱՊՎԱԾ ԲՈՂՈՔՆԵՐ ՔՆՆՈՂ ԱՆՁԻ

թիվ ԳԲՔԱ-LO-2019/52

Նախագահությամբ՝ ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձ Լ. Օհանյանի

Քարտուղարությամբ՝ Լ. Անանիկյանի

Պատվիրատու՝ ՀՀ ոստիկանություն

Բողոք բերող՝ «Էքսպրես Սերվ» ՍՊԸ

Մասնակցությամբ՝

Պատվիրատուի ներկայացուցիչներ՝ Ռ. Կարապետյանի, Ռ. Բաղրամյանի, Մ. Ավետիսյանի,

Բողոքաբերի ներկայացուցիչ՝ Ա. Մկրտչյանի,

Գնման ընթացակարգի ծածկագիրը և առարկան՝

«ՀՀ Ո ԳՀԱՊՁԲ-ԱՀ/2019-ՃՈ» ծածկագրով գնանշման հարցում, ազդանշանային համակարգերի ձեռքբերում:

ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձը (այսուհետ՝ նաև Բողոքներ քննող անձ)՝ քննության առնելով «Էքսպրես Սերվ» ՍՊԸ-ի (այսուհետ՝ նաև Ընկերություն) կողմից 10.07.2019թ.-ին ներկայացրած բողոքը (այսուհետ՝ նաև Բողոք) և կից փաստաթղթերը,

Պ Ա Ր Զ Ե Տ

1. Գործի նախապատմությունը

Դիմելով ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձին՝ Ընկերությունը ներկայացրած բողոքով խնդրել է «ՀՀ Ո ԳՀԱՊՁԲ-ԱՀ/2019-ՃՈ» ծածկագրով գնանշման հարցման Ընթացակարգը հայտարարել չկայացած կամ անվավեր:

Բողոքներ քննող անձին բողոքը մակագրվել է 10.07.2019թ.-ն և 10.07.2019թ.-ի որոշմամբ բողոքը ընդունվել է վարույթ և 18.07.2019թ.-ին և 29.07.2019թ.-ին նշանակվել են նիստեր:

Բողոքի քննությունն ավարտվել է 29.07.2019թ.-ին և Բողոքներ քննող անձի որոշման հրապարակման օր է նշանակվել 09.08.2019թ.-ին:

2. «Էքսպրես Սերվ» ՍՊԸ-ի ներկայացրած փաստերը, հիմնավորումները և պահանջը.

«Էքսպրես Սերվ» ՍՊԸ-ն ներկայացրած բողոքով հայտնել է հետևյալը.

«ՀՀ Ոստիկանության կողմից անհրաժեշտություն է առաջացել գնել ագղանշանային համակարգեր /լուսաձայնային սարքեր/, որոնց գնելու նպատակով gnumner.am կայքում հրապարակվել է «ՀՀ Ո ԳՀԱՊՁԲ-ԱՀ/2019-ՃՈ» ծածկագրով գնանշման Ընթացակարգ:

Վերը նշված Ընթացակարգը հայտարարվել է 26.06.2019թ. իսկ հայտերի պետք է բացվեն 10.07.2019թ. ժամը 11:00-ին:

Սույն բողոքի պատճառ է հանդիսանում նշված Ընթացակարգի հրավերով սահմանված տեխնիկական բնութագրերի թերի լինելը:

Ընթացակարգի հրավերով սահմանվել է հետևյալ բնութագրերը.

1. Լույսային համակարգի կոնֆիգուրացիան.

- Լուսաարձակումը երկկողմանի՝ առջևից և հետևից:

- 8 լրակազմով, յուրաքանչյուրը՝ 5 Վտ առկայծվող լույսաճառագայթող դիոդներով (LED),ուղղորդող կողային 2 LED-ով, յուրաքանչյուրը 1 Վտ հզորությամբ:

2. Լուսային ռեժիմի կառավարումը՝ հեռակառավարվող վահանակով՝ ձայնազդանշանային համակագից:

3. Համակարգի լուսամփոփը պատրաստված է կիսակարբոնատե ճկուն թափանցիկ նյութից,այլումինե շրջանակով,բարձրախոսը պաշտպանված է չժանգոտվող թիթեղով, ավտոմեքենային ամրակցվող երկաթյա ամրակներով:

4. Աշխատանքային լարումը՝ 12 Վ :

5. Աշխատանքային ընթացիկ ծախսը 3 Ա/ ժամ,/ առավելագույն/:

6. Լույսաճառագայթող դիոդների (LED) թարթման հաճախականությունը 300 անգամ/րոպեում: Լույսաճառագայթող դիոդների (LED) գույները կապույտ/կարմիր:

7. Շրջակա միջավայրի ջերմաստիճանը -40^0-ից+50^0 C:

8. Հերմետիկ փակ, լիովին պաշտպանված փոշուց և հզոր ջրային շթից (IP65)

9. Լուսամփոփի կարծրությունը H4

10. Լուսամփոփի թափանցելիությունը >90%

11. Համակարգը համալրված է բարձրախոսով 250 Վտ 8 Օհմ հզորությամբ

(HA-250W 8Ohm:350-7000Hz: 130—180dB) և ձայնաազդանշանային համակարգից:

12. Չափսերը ոչ ավելի 1200X300X220 մմ, մաքուր քաշը ոչ ավելի- 13 կգ,

13. Երաշխիք- 12 ամիս:

Պահանջվող սերտիֆիկատներ՝ Certificate of origin,

Պարտադիր պայման

Ապրանքը պետք է լինի նոր, չօգտագործված, գործարանային փաթեթավորմամբ: Մատակարարումը և տեղադրումը Կատարողի կողմից, Ք. Երևան, Ծովակալ Իսակովի 9 հասցեով:

«Գնումների մասին» ՀՀ օրենքի 3-րդ հոդվածի 1-ին և 2-րդ մասերի համաձայն.

1.Սույն օրենքի նպատակն է ապահովել գնումների գործընթացում հատուցման դիմաց արժեք, այն է՝

1) պատվիրատուին վերապահված լիազորությունների կատարման համար անհրաժեշտ՝ կարիքին համապատասխան ապրանքների, աշխատանքների և ծառայությունների ձեռքբերում՝ համարժեք հատուցմամբ.

2) գնումների և գնումների գործընթացի տնտեսող, արդյունավետ և օգտավետ իրականացում:

2. Գնումների գործընթացը հիմնվում է հետևյալ սկզբունքների վրա.

1)գնման գործընթացի միասնական կանոններով մրցակցային, թափանցիկ, համաչափ, հրապարակային և ոչ խտրական հիմունքներով կազմակերպում.

2)պայմանագրի կնքման նպատակով մասնակիցների շրջանակի ընդլայնում և նրանց միջև մրցակցության խրախուսում.

3)ցանկացած անձի համար, անկախ նրա օտարերկրյա ֆիզիկական անձ. կազմակերպություն կամ քաղաքացիություն չունեցող անձ լինելու հանգամանքից, գնման գործընթացին մասնակցելու իրավահավասարություն:

Օրենքի 7-րդ հոդվածի 1-ին և 2-րդ մասերի համաձայն.

1.Ցանկացած անձ, անկախ նրա օտարերկրյա ֆիզիկական անձ, կազմակերպություն կամ քաղաքացիություն չունեցող անձ լինելու հանգամանքից, ունի գնման գործընթացին մասնակցելու հավասար իրավունք:

2.Գնումների գործընթացին որևէ երկրի ռեզիդենտ հանդիսացող անձի (անձանց) մևսսնակցությունը կարող է սահմանափակվել միայն Հայաստանի Հանրապետության կառավարության որոշմամբ, եթե դա անհրաժեշտ է Հայաստանի Հանրապեւոության ազգային անվտանգության և պաշտպանության ապահովման համար:

Օրենքի 13-րդ հոդվածի համաձայն՝

1.Գնման առարկայի բնութագրերը պեւոք է ամբողջությամբ և հստակ նկարագրեն ձեռք բերվող ապրանքի, աշխատանքի կամ ծառայության հատկանիշները, դրանց ձեռքբերման և վճարման պայմանները՝ բացառելով տարակերպ մեկնաբանությունը: Գնման առարկայի բնութագրերը, որոնք ներառում են նաև պայմանագրի գինը, ընդգրկվում են պայմանագրում:

2.Գնման առարկայի բնութագրերը՝

1)պետք է մրցակցության հավասար պայմաններ ապահովեն հնարավոր մասնակիցների համար.

2)չպետք է հանգեցնեն գնումների գործընթացում մրցակցության համար չհիմնավորված խոչընդոտների առաջացմանը.

3)պետք է լինեն օբյեկտիվորեն հիմնավորված և համարժեք լինեն այն կարիքին, որի բավարարման նպատակով կատարվում է տվյալ գնումը.

4)ներառում են գնման առարկայի մասնագրի, տեխնիկական տվյալների, իսկ աշխատանքների դեպքում նաև. աշխատանքների ծավալաթերթի. ժամանակացույցի և այլ ոչ գնային պւսյմանների ամբողջական և հեւմարժեք նկարագրությունը:

3.Ելնելով գնման առարկայի առանձնահատկությունից՝ դրանց հատկանիշները հնարավորինս ներառում են ձեռք բերվող ապրանքի, աշխատանքի կամ ծառայության

որակին, ստանդարտին, անվտանգությանը, պայմանակսն նշաններին, տերմինա-բանությանը, փաթեթավորմանը, բեռնաթափմանը, չափին, նախագծերին, ինչպես նաև գնման առարկայի այլ հատկանիշներին վերաբերող պայմանների հստակ նկարագրությունը՝ հիմնված միջազգային ստանդարտների և Հայաստանի Հանրապետությունում գործող նորմատիվատեխնիկական փաստաթղթերի, ստանդարտների, իսկ դրանց բացակայության դեպքում՝ ժամանակավոր տեխնիկական պայմանների վրա:

4.Գնման առարկայի հատկանիշները կարող են սահմանվել նաև. որպես կատարողականի կամ գործառութային (ֆունկցիոնալ) նկարագրեր, որոնք պետք է ներկայացվեն բավարար ճշտությամբ՝ հնարավորություն տալով մասնակիցներին և պատվիրատուին ճշգրիտ ընկալել պայմանագրի առարկան:

5.Գնման առարկայի հատկանիշները չպետք է պահանջ կամ հղում պարունակեն որևէ առևտրային նշանի, ֆիրմային անվանմանը, արտոնագրին, էսքիզին կամ մոդելին, ծագման երկրին կամ կոնկրետ աղբյուրին կամ արտադրողին, բացառությամբ այն դեպքերի, երբ անհնար է գնման առարկայի բնութագրումն առանց դրանց: Հղումներ օգտագործելու դեպքում հատկանիշների բնութագիրը պետք է պարունակի «կամ համարժեք» բառերը:

Օրենքի 46-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ յուրաքանչյուր անձ իրավունք ունի բողոքարկելու պատվիրատուի, գնահատող հանձնաժողովի և գնումների բողոքարկման խորհրդի գործողությունները (անգործությունը) և որոշումները:

Օրենքի 50-րդ հոդվածի 2-րդ մասի 2-րդ կետի համաձայն՝ եթե բողոքը ներկայացրած անձը բողոքարկում է՝ գնման առարկայի բնութագրերը, նախաորակավորման հայտարարության կամ հրավերի պահանջները, ապա բողոքը ներկայացվում է մինչև հայտերի ներկայացման վերջնաժամկետը:

Այսպիսով, Պատվիրատուն Ընթացակարգի հրավերի տեխնիկական բնութագրով սահմանված ձևակերպումները հակասում են գնումների մասին օրենսդրությամբ սահմանված պահանջներին՝ Օրենքի 13-րդ հոդվածին:

Պատվիրատուն նման ձևակերպումներով մրցակցության հավասար պայմաններ չի ապահովել հնարավոր մասնակիցների համար, այս բնութագրերը հանգեցնում են գնումների գործընթացում մրցակցության համար չհիմնավորված խոչնդոտների

առաջացմանը, օբյեկտիվորեն հիմնավորված և համարժեք չեն այն կարիքին, որի բավարարման նպատակով կատարվում է տվյալ գնումը:»:

Վերոգրյալների հիման վրա, Ընկերությունը Բողոքներ քննող անձից խնդրել է «ՀՀ Ո ԳՀԱՊՁԲ-ԱՀ/2019-ՃՈ» ծածկագրով գնանշման հարցման Ընթացակարգը հայտարարել չկայացած կամ անվավեր:

Ներկայանալով նիստին Ընկերության ներկայացուցիչը բանավոր կերպով հայտնել է, որ հրավերում առկա բնութագրի թերությունը կայանում է մասնավորապես 11-րդ կետով առկա *«Համակարգը համալրված է բարձրախոսով 250 Վտ 8 Օհմ հզորությամբ (HA-250W 8Ohm:350-7000Hz: 130—180dB) և ձայնաազդանշանային համակարգից»* պահանջին, քանի որ 250 Վտ-ի փոխարեն պետք է լիներ նշված 150 Վտ:

07.08.2019թ.-ին Բողոքներ քննող անձին Ընկերության կողմից ներկայացվել է վերջինիս կողմից կատարված հարցման ՀՀ ոստիկանության «Ճանապարհային ոստիկանություն» ծառայության կողմից տրված պատասխանը, որում մասնավորապես նշվել է. *«Ի պատասխան Ձեր հարցմանը պատասխանում ենք, որ 2017-2018թ.թ. ընթացքում ձեռք է բերվել TBD-GA մոդելի լուսաձայնային համակարգեր հետևյալ տեխնիկական բնութագրով*

1. Լույսային համակարգի կոնֆիգուրացիան.

- Լուսաարձակումը երկկողմանի՝ առջևից և հետևից:

- 8 լրակազմով, յուրաքանչյուրը՝ 5 Վտ առկայծվող լույսաճառագայթող դիոդներով (LED), ուղղորդող կողային 2 LED-ով, յուրաքանչյուրը 1 Վտ հզորությամբ:

2. Լուսային ռեժիմի կառավարումը՝ հեռակառավարվող վահանակով՝ ձայնազդանշանային համակագից:

3. Համակարգի լուսամփոփը պատրաստված է կիսակարբոնատե ճկուն թափանցիկ նյութից, այլումինե շրջանակով, բարձրախոսը պաշտպանված է չժանգոտվող թիթեղով, ավտոմեքենային ամրակցվող երկաթյա ամրակներով:

4. Աշխատանքային լարումը՝ 12 Վ:

5. Աշխատանքային ընթացիկ ծախսը 3 Ա/ ժամ/ առավելագույն/:

6. Լույսաճառագայթող դիոդների (LED) թարթման հաճախականությունը 300 անգամ/րոպեում: Լույսաճառագայթող դիոդների (LED) գույները կապույտ/կարմիր:

7. Շրջակա միջավայրի ջերմաստիճանը -40^0-ից+50^0 C:

8. Հերմետիկ փակ, լիովին պաշտպանված փոշուց և հզոր ջրահոսքից (IP65)

9. Լուսամփոփի կարծրությունը H4

10. Լուսամփոփի թափանցելիությունը >90%

11. Համակարգը համալրված է բարձրախոսով 150 Վտ 8 Օհմ հզորությամբ (HA-150W 8Ohm:350-5000Hz: 120—130dB) և ձայնաազդանշանային համակարգից:

12. Չափսերը ոչ ավելի 1200X300X220 մմ, մաքուր քաշը ոչ ավելի-13 կգ,

13. Երաշխիք-12 ամիս»:

3. <u>ՀՀ ոստիկանության կողմից բողոքի վերաբերյալ ներկայացված փաստարկները, հիմնավորումները և դիրքորոշումը.</u>

Բողոքներ քննող անձը 11.07.2019թ. գրությամբ դիմել է ՀՀ ոստիկանությանը (այսուհետ նաև՝ Պատվիրատու), հնարավորություն տալով «Էքսպրես Սերվ» ՍՊԸ-ի կողմից 10.07.2019թ. ներկայացված բողոքի վերաբերյալ ներկայացնել անհրաժեշտ բոլոր փաստաթղթերի պատճեններն ու Պատվիրատուի գրավոր կարծիքը:

Պատվիրատուն լինելով պատշաճ ծանուցված կայանալիք նիստի տեղի, օրվա և ժամի մասին, ներկայացել է նիստին և բանավոր կերպով առարկել ներկայացված բողոքի դեմ, նշելով, որ Պատվիրատուի կողմից ապահովվել է գնումների գործընթացի մրցակցությունը:

Անդրադառնալով բողոքաբերի այն պնդմանը, որ բարձրախոսի հզորությունը 250 Վտ-ի փոխարեն պետք է լիներ նշված 150 Վտ, Պատվիրատուի ներկայացուցիչը հայտնեց, որ դա եղել է վրիպակ, իրականում պետք է նշվեր 250 Վտ, սակայն եթե հետագայում մատակարարվի 250 Վտ հզորության ապրանք, ապա Պատվիրատուն կընդունի այն:

4. <u>ԳԲՔԱ-LO-2019/52 բողոքի քննության համար էական նշանակություն ունեցող փաստերը.</u>

Սույն գործի փաստերի համաձայն՝

ՀՀ ոստիկանության կողմից ազդանշանային համակարգերի ձեռքբերման նպատակով 26.06.2019թ. հայտարարվել է «ՀՀ Ո ԳՀԱՊՁԲ-ԱՀ/2019-ՃՈ» ծածկագրով գնանշման հարցման ընթացակարգ (այսուհետ նաև՝ Ընթացակարգ):

Ընթացակարգի հայտերի բացման նիստի օր է սահմանվել 10.07.2019թ.-ին:

Ընթացակարգի հրապարակման օրվանից՝ 26.06.2019թ.-ից մինչև հայտերի ներկայացման վերջնաժամկետը լրանալուց հինգ օրացուցային օր առաջ հնարավոր որևէ մասնակիցների կողմից Պատվիրատուին գրավոր հարցումներ չեն ներկայացվել:

Ընթացակարգի հրավերի, պայմանագրի նախագծի անբաժանելի մաս կազմող թիվ 1 հավելվածի՝ տեխնիկական բնութագիր-գնման ժամանակացույցով սահմանվել է հետևյալը.

Տեսակը՝ TBD-GA-20001M կամ համարժեքը.

1. Լույսային համակարգի կոնֆիգուրացիան.

- Լուսաարձակումը երկկողմանի՝ առջևից և հետևից:

- 8 լրակազմով, յուրաքանչյուրը՝ 5 Վտ առկայծվող լույսաճառագայթող դիոդներով (LED), ուղղորդող կողային 2 LED-ով, յուրաքանչյուրը 1 Վտ հզորությամբ:

2. Լուսային ռեժիմի կառավարումը՝ հեռակառավարվող վահանակով՝ ձայնազդանշանային համակագից:

3. Համակարգի լուսամփոփը պատրաստված է կիսակարբոնատե ճկուն թափանցիկ նյութից, այլումինե շրջանակով, բարձրախոսը պաշտպանված է չժանգոտվող թիթեղով, ավտոմեքենային ամրակցվող երկաթյա ամրակներով:

4. Աշխատանքային լարումը՝ 12 Վ:

5. Աշխատանքային ընթացիկ ծախսը 3 Ա/ ժամ/ առավելագույն/:

6. Լույսաճառագայթող դիոդների (LED) թարթման հաճախականությունը 300 անգամ/րոպեում: Լույսաճառագայթող դիոդների (LED) գույները կապույտ/կարմիր:

7. Շրջակա միջավայրի ջերմաստիճանը -40^0-ից+50^0 C:

8. Հերմետիկ փակ, լիովին պաշտպանված փոշուց և հզոր ջրային շթից (IP65)

9. Լուսամփոփի կարծրությունը H4

10. Լուսամփոփի թափանցելիությունը >90%

11. Համակարգը համալրված է բարձրախոսով 250 Վտ 8 Օհմ հզորությամբ

(HA-250W 8Ohm:350-7000Hz: 130—180dB) և ձայնաազդանշանային համակարգից:

12. Չափսերը ոչ ավելի 1200X300X220 մմ, մաքուր քաշը ոչ ավելի- 13 կգ,

13. Երաշխիք-12 ամիս:

Պահանջվող սերտիֆիկատներ՝ Certificate of origin,

Պարտադիր պայման

Ապրանքը պետք է լինի նոր, չօգտագործված, գործարանային փաթեթավորմամբ: Մատակարարումը և տեղադրումը Կատարողի կողմից, Ք. Երևան, Ծովակալ Իսակովի 9 հասցեով:

www.armeps.am կայքի ուսումնասիրության արդյունքում պարզվել է, որ Ընթացակարգին մասնակցելու նպատակով, հայտ է ներկայացրել միայն 1 (մեկ) մասնակից:

5. <u>Բողոքներ քննող անձի հիմնավորումները և եզրահանգումը</u>.

Բողոքներ քննող անձը լրիվ, օբյեկտիվ և բազմակողմանի հետազոտելով և գնահատելով սույն գործում առկա ապացույցները, և համադրելով դրանք գործով պարզված փաստական հանգամանքների հետ, հանգում է այն եզրակցությանը, որ «Էքսպրես Սերվ» ՍՊԸ-ի կողմից 10.07.2019թ. ներկայացված բողոքը ենթակա է ամբողջությամբ մերժման, հետևյալ պատճառաբանությամբ.

Այսպես՝

«Գնումների մասին» ՀՀ օրենքի (այսուհետ նաև՝ Օրենք) 3-րդ հոդվածի 2-րդ մասի 1-ին և 2-րդ կետերի համաձայն՝ գնումների գործընթացը հիմնվում է հետևյալ սկզբունքների վրա.

1) գնման գործընթացի միասնական կանոններով մրցակցային, թափանցիկ, համաչափ, հրապարակային և ոչ խտրական հիմունքներով կազմակերպում.

2) պայմանագրի կնքման նպատակով մասնակիցների շրջանակի ընդլայնում և նրանց միջև մրցակցության խրախուսում:

Օրենքի 7-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ ցանկացած անձ, անկախ նրա օտարերկրյա ֆիզիկական անձ, կազմակերպություն կամ քաղաքացիություն չունեցող անձ լինելու հանգամանքից, ունի գնման գործընթացին մասնակցելու հավասար իրավունք:

Օրենքի 13-րդ հոդվածի.

1. Գնման առարկայի բնութագրերը պետք է ամբողջությամբ և հստակ նկարագրեն ձեռք բերվող ապրանքի, աշխատանքի կամ ծառայության հատկանիշները, դրանց ձեռքբերման և վճարման պայմանները՝ բացառելով տարակերպ մեկնաբանությունը: Գնման առարկայի բնութագրերը, որոնք ներառում են նաև պայմանագրի գինը, ընդգրկվում են պայմանագրում:

2. Գնման առարկայի բնութագրերը՝

1) պետք է մրցակցության հավասար պայմաններ ապահովեն հնարավոր մասնակիցների համար.

2) չպետք է հանգեցնեն գնումների գործընթացում մրցակցության համար չհիմնավորված խոչընդոտների առաջացմանը.

3) պետք է լինեն օբյեկտիվորեն հիմնավորված և համարժեք լինեն այն կարիքին, որի բավարարման նպատակով կատարվում է տվյալ գնումը.

4) ներառում են գնման առարկայի մասնագրի, տեխնիկական տվյալների, իսկ աշխատանքների դեպքում՝ նաև աշխատանքների ծավալաթերթի, ժամանակացույցի և այլ ոչ գնային պայմանների ամբողջական և համարժեք նկարագրությունը:

3. Ելնելով գնման առարկայի առանձնահատկությունից՝ դրանց հատկանիշները հնարավորինս ներառում են ձեռք բերվող ապրանքի, աշխատանքի կամ ծառայության որակին, ստանդարտին, անվտանգությանը, պայմանական նշաններին, տերմինաբանությանը, փաթեթավորմանը, բեռնաթափմանը, չափին, նախագծերին, ինչպես նաև գնման առարկայի այլ հատկանիշներին վերաբերող պայմանների հստակ նկարագրությունը՝ հիմնված միջազգային ստանդարտների և Հայաստանի Հանրապետությունում գործող նորմատիվատեխնիկական փաստաթղթերի, ստանդարտների, իսկ դրանց բացակայության դեպքում՝ ժամանակավոր տեխնիկական պայմանների վրա:

4. Գնման առարկայի հատկանիշները կարող են սահմանվել նաև որպես կատարողականի կամ գործառութային (ֆունկցիոնալ) նկարագրեր, որոնք պետք է ներկայացվեն բավարար ճշտությամբ՝ հնարավորություն տալով մասնակիցներին և պատվիրատուին ճշգրիտ ընկալել պայմանագրի առարկան:

5. Գնման առարկայի հատկանիշները չպետք է պահանջ կամ հղում պարունակեն որևէ առևտրային նշանի, ֆիրմային անվանմանը, արտոնագրին, էսքիզին կամ մոդելին, ծագման երկրին կամ կոնկրետ աղբյուրին կամ արտադրողին, բացառությամբ այն դեպքերի, երբ անհնար է գնման առարկայի բնութագրումն առանց դրանց: Հղումներ օգտագործելու դեպքում հատկանիշների բնութագիրը պետք է պարունակի «կամ համարժեք» բառերը:

ՀՀ կառավարության 04.05.2017թ. թիվ 526-Ն որոշմամբ հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման» կարգի (այսուհետ նաև՝ Կարգ) 22-րդ կետի համաձայն՝ գնման առարկայի բնութագրերը և մասնակիցների որակավորման հատկանիշների

գնահատմանը ներկայացվող չափանիշները սահմանելիս պետք է հաշվի առնել, որ դրանց պետք է բավարարեն մեկից ավելի հնարավոր մասնակիցներ...:

Սույն գործի փաստերի հիման վրա Բողոքներ քննող անձն արձանագրում է, որ.

ՀՀ ոստիկանության կողմից ազդանշանային համակարգերի ձեռքբերման նպատակով 26.06.2019թ. հայտարարվել է «ՀՀ Ո ԳՀԱՊՁԲ-ԱՀ/2019-ՃՈ» ծածկագրով գնանշման հարցման ընթացակարգ (այսուհետ նաև՝ Ընթացակարգ):

Ընթացակարգի հայտերի բացման նիստի օր է սահմանվել 10.07.2019թ.-ին:

Ընթացակարգի հրապարակման օրվանից՝ 26.06.2019թ.-ից մինչև հայտերի ներկայացման վերջնաժամկետը լրանալուց հինգ օրացուցային օր առաջ հնարավոր որևէ մասնակիցների կողմից Պատվիրատուին գրավոր հարցումներ չեն ներկայացվել:

Ընթացակարգի հրավերի, պայմանագրի նախագծի անբաժանելի մաս կազմող թիվ 1 հավելվածի՝ տեխնիկական բնութագիր-գնման ժամանակացույցով սահմանվել է հետևյալը.

Տեսակը՝ TBD-GA-20001M կամ համարժեքը.

1. Լույսային համակարգի կոնֆիգուրացիան.

- Լուսաարձակումը երկկողմանի՝ առջևից և հետևից:

- 8 լրակազմով, յուրաքանչյուրը՝ 5 Վտ առկայծվող լույսաճառագայթող դիոդներով (LED), ուղղորդող կողային 2 LED-ով, յուրաքանչյուրը 1 Վտ հզորությամբ:

2. Լուսային ռեժիմի կառավարումը՝ հեռակառավարվող վահանակով՝ ձայնազդանշանային համակագից:

3. Համակարգի լուսամփոփը պատրաստված է կիսակարբոնատե ճկուն թափանցիկ նյութից, այլումինե շրջանակով, բարձրախոսը պաշտպանված է չժանգոտվող թիթեղով, ավտոմեքենային ամրակցվող երկաթյա ամրակներով:

4. Աշխատանքային լարումը՝ 12 Վ:

5. Աշխատանքային ընթացիկ ծախսը 3 Ա/ ժամ/ առավելագույն/:

6. Լույսաճառագայթող դիոդների (LED) թարթման հաճախականությունը 300 անգամ/րոպեում: Լույսաճառագայթող դիոդների (LED) գույները կապույտ/կարմիր:

7. Շրջակա միջավայրի ջերմաստիճանը -40^0-ից+50^0 C:

8. Հերմետիկ փակ, լիովին պաշտպանված փոշուց և հզոր ջրային շթից (IP65)

9. Լուսամփոփի կարծրությունը H4

10. Լուսամփոփի թափանցելիությունը >90%

11. Համակարգը համալրված է բարձրախոսով 250 Վտ 8 Օհմ հզորությամբ

(HA-250W 8Ohm:350-7000Hz: 130—180dB) և ձայնաազդանշանային համակարգից:

12. Չափսերը ոչ ավելի 1200X300X220 մմ, մաքուր քաշը ոչ ավելի- 13 կգ,

13. Երաշխիք- 12 ամիս:

Պահանջվող սերտիֆիկատներ՝ Certificate of origin,

Պարտադիր պայման

Ապրանքը պետք է լինի նոր, չօգտագործված, գործարանային փաթեթավորմամբ: Մատակարարումը և տեղադրումը Կատարողի կողմից, Ք. Երևան, Ծովակալ Իսակովի 9 հասցեով:

www.armeps.am կայքի ուսումնասիրության արդյունքում պարզվել է, որ Ընթացակարգին մասնակցելու նպատակով, հայտ է ներկայացրել միայն 1 (մեկ) մասնակից:

Բողոքներ քննող անձը արձանագրում է նաև, որ Ընթացակարգի հրավերի թիվ 1 հավելվածով՝ տեխնիկական բնութագիր-գնման ժամանակացույցով սահմանված պահանջները հնարավորություն են տալիս մասնակիցներին ճշգրիտ ընկալել գնման առարկան, ապահովում են մրցակցության հավասար պայմաններ հնարավոր մասնակիցների համար, օբյեկտիվորեն հիմնավորված են և համարժեք են այն կարիքին, որի բավարարման նպատակով կատարվում է տվյալ գնումը:

Բացի այդ, Բողոքներ քննող անձը, փաստում է, որ գնումների օրենսդրությունը, հիմնվելով գնման գործընթացի մրցակցային, թափանցիկ, համաչափ, հրապարակային, ոչ խտրական, գնման գործընթացին մասնակցելու իրավահավասարության սկզբունքների վրա, նպատակ է հետապնդում ապահովելու գնումների գործընթացում հատուցման դիմաց պատվիրատուին վերապահված լիազորությունների կատարման համար անհրաժեշտ՝ կարիքին համապատասխան ապրանքների, աշխատանքների և ծառայությունների ձեռքբերումը՝ համարժեք հատուցմամբ, և որ ամենակարևորն է՝ գնումների գործընթացի տնտեսող, արդյունավետ և օգտավետ իրականացման ապահովումը:

Ինչպես նաև, Բողոքներ քննող անձը հարկ է համարում հավելել, որ վերոնշյալ սկզբունքների ապահովումն ու իրականացումը գնումների օրենսդրության շրջանակներում իրացնելու համար, անհրաժեշտ պայման է նաև ցանկացած անձի՝ գնման գործընթացին մասնակցելու հավասար իրավունք ունենալու սկզբունքը՝ անկախ նրա օտարերկրյա ֆիզիկական անձ, կազմակերպություն կամ քաղաքացիություն չունեցող անձ լինելու հանգամանքից:

Բողոքներ քննող անձն փաստում է նաև, որ Ընթացակարգի գնման առարկայի բնութագրերը ամբողջությամբ և հստակ նկարագրում են ձեռքբերվող ապրանքի հատկանիշները՝ բացառելով տարակերպ մեկնաբանությունը: Պատվիրատուն, նման բնութագրեր սահմանելով, հնարավոր մասնակիցների համար ապահովել է մրցակցության հավասար պայմաններ, դրանով իսկ բացառելով գնումների գործընթացում մրցակցության համար չհիմնավորված խոչընդոտների առաջացումը: Բացի այդ, նման բնութագրերը օբյեկտիվորեն հիմնավորված և համարժեք են այն կարիքին, որի բավարարման նպատակով հայտարարվել է Ընթացակարգը, որին էլ մասնակցության հայտ է ներկայացրել 1 (մեկ) մասնակից:

Օրենքի 50-րդ հոդվածի 1-ին մասի 5-րդ ենթակետի համաձայն՝ գնումների հետ կապված բողոքներ քննող անձին բողոքը ներկայացվում է գրավոր, ստորագրված, դրանում ներառելով՝ … բողոքի փաստացի և իրավական հիմքերը, ապացույցները:

Վկայակոչված հոդվածի վերլուծությունից հետևում է, որ ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձը բողոքի քննությունը հարուցում և իրականացնում է միմիայն ներկայացված բողոքի հիման վրա և ենթակա է քննության միայն դրա սահմաններում: Ընդ որում, բողոք ներկայացնելով՝ շահագրգիռ անձն ինքնուրույն է որոշում իր բողոքի պահանջի շրջանակը, ինչը տնօրինչականության սկզբունքի դրսևորման արդյունք է, որն անձի՝ ՀՀ Սահմանադրությամբ և օրենքով նրան տրված հնարավորությունն է սեփական հայեցողությամբ տնօրինելու իր նյութական և դատավարական (ընթացակարգային) իրավունքները և դրանց պաշտպանության եղանակները:

Բողոքներ քննող անձը հարկ է համարում արձանագրել, որ բողոքի փաստացի և իրավական հիմքերը, ապացույցները ներկայացնելու պարտականությունը դրված լինելով բողոքաբերի վրա, վերջինս է հանդիսանում շահագրգիռ այն անձը, ով, ինքնուրույն որոշելով իր բողոքի պահանջի շրջանակը, պետք է բողոքի հետ միաժամանակ ներկայացնի փաստացի և իրավական հիմքերը, ապացույցները՝ որպես բողոքի բավարարմանն ուղղված էական նշանակություն ունեցող հիմքեր ու հիմնավորումներ: Ընդ որում, օրենսդիրը չի սահմանափակում բողոքի փաստացի և իրավական հիմքերը, ապացույցները ներկայացնել միայն բողոքի հետ միաժամանակ, այլև բողոքաբերը կարող է ու զրկված չէ լրացնելու/փոփոխելու/նվազեցնելու բողոքի փաստացի և իրավական հիմքերը, ապացույցները գործի քննության ընթացքում:

Սույն գործով Ընկերությունը, օգտվելով իրեն՝ «Գնումների մասին» ՀՀ օրենքի 46-րդ հոդվածի դրույթերով վերապահված բողոքարկման իրավունքից, իրացրել է այն՝ ներկայացնելով բողոք:

Ընկերությունը, սակայն, Բողոքներ քննող անձին չի ներկայացրել վերաբերելի ապացույց առ այն, որ Պատվիրատուի կողմից Օրենքի 13-րդ հոդվածով սահմանված դրույթների խախտած լինելու փաստը: Այն, որ սահմանված տեխնիկական բնութագրում առկա չափորոշիչները խոչընդոտում են հնարավոր մասնակիցների մրցակցության հավասար պայմաններ ունենալու իրավունքը:

Ընդ որում, այդպիսի հնարավորություն Ընկերությունը ունեցել է, թե բողոքը ներկայացնելու պահին, և թե բողոքի քննության ընթացքում՝ մինչև որոշման կայացման պահը:

Այս պարագայում բողոքաբերի կողմից մատնանշված այյն փաստը, որ բարձրախոսի հզորությունը ոչ թե պետք է լինի 250 այլ 150 Վտ, այդպես էլ չհիմնավորվեց և ավելին՝ հերքվեց Պատվիրատուի ներկայացուցչի կողմից, ով բանավոր կերպով նշեց, որ 250 Վտ հզորությամբ ապրանք մատակարարվելու դեպքում այն կընդունվի:

Իսկ ինչ վերաբերում է բողոքաբերի կողմից 07.08.2019թ.-ին գրությանը կից ներկայացված ՀՀ ոստիկանության «ճանապարհային ոստիկանություն» ծառայության կողմից տրված պատասխանին, ապա Բողոքներ քննող անձը հարկ է համարում նշել, որ այն չի կարող հանդիսանալ վերաբերելի ապացույց առ այն, որ թիվ «ՀՀ Ո ԳՀԱՊՁԲ-ԱՀ/2019-ՃՈ» ծածկագրով գնանշման հարցման ընթացակարգի տեխնիկական բնութագրում նույնպես պետք է լիներ նշված 150 Վտ, քանի որ նախկինում 2017-2018թթ. ընթացքում նշվել է 150 Վտ: Պետք է նաև փաստել, որ հենց նույն գրության պատասխանում առկա է այլ տարբերություն *(HA-150W 8Ohm:350-**5000Hz**: 120−**130dB**)* ի համեմատություն թիվ «ՀՀ Ո ԳՀԱՊՁԲ-ԱՀ/2019-ՃՈ» ծածկագրով ընթացակարգի հրավերի, պայմանագրի նախագծի անբաժանելի մաս կազմող թիվ 1 հավելվածի՝ տեխնիկական բնութագիր-գնման ժամանակացույցով սահմանված բարձրախոսի հզորության *(HA-250W 8Ohm:350-**7000Hz**: 130−**180dB**)*:

Այսպիսով, վերոհիշյալ փաստական հանգամանքների և իրավական նորմերի լույսի ներքո, դրանց համակարգված վերլուծության արդյունքում, Բողոքներ քննող անձը հանգում է այն եզրակացության, որ «Էքսպրես Սերվ» ՍՊԸ-ի կողմից բողոքով բերված փաստերն ու հանգամանքները անհիմն են, իսկ գնման ընթացակարգի պահանջները հիմնավոր են և չեն

սահմանափակում հնարավոր մասնակիցների հավասար իրավունքները: Հատկապես այն դեպքում, երբ Պատվիրատուի կողմից հայտնած բանավոր դիրքորոշմամբ հերքվում են Բողոքաբերի կողմից նշված հնարավոր մասնակիցների մրցակցության ոտնահարումը և գնումների մասին օրենսդրությամբ սահմանված պահանջների խախտումների առկայությունը:

Տվյալ պարագայում, Բողոքներ քննող անձն արձանագրում է, որ Ընթացակարգի գնահատող հանձնաժողովի կողմից Օրենքի 13-րդ հոդվածով սահմանված պահանջների խախտում առկա չէ, ինչը կարող էր հանգեցնել գնման ընթացակարգը չկայացած հայտարարելուն:

Ելնելով վերոգրյալից և ղեկավարվելով «Գնումների մասին» ՀՀ օրենքի 50-րդ հոդվածի 7-րդ մասի 1-ին կետի «բ» ենթակետով՝ ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձը,

Ո Ր Ո Շ Ե Ց

«Էքսպրես Սերվ» ՍՊԸ-ի կողմից 10.07.2019թ. ներկայացված թիվ ԳԲՔԱ-ԼՕ-2019/52 ծածկագրով բողոքը մերժել ամբողջությամբ՝ անհիմն լինելու պատճառաբանությամբ:

ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձի ընդունած որոշումն ուժի մեջ է մտնում այն տեղեկագրում հրապարակելուն հաջորդող օրը:

ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձի ընդունած որոշումն իրավապարտադիր է, որը կարող է փոփոխվել կամ վերացվել, այդ թվում՝ մասնակի, միայն դատարանի կողմից:

ՀՀ գնումների հետ կապված
բողոքներ քննող անձ՝ **ԼԵՎՈՆ ՕՀԱՆՅԱՆ**